ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ և ԾՐԱԳՐԵՐԻ ՊԱՀՈՒՄՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ և ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N << ՀՀԱՆ-ՇՀԾՁԲ-16-15/6-2>>

ք. Երևան << 11>> նոյեմբեր 2016թ.

<< արդարադատության նախարարության աշխատակազմ , ի դեմս աշխատակազմի ղեկավար **Արմեն Գևորգյանի**, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և **<<Մեգատոֆթ>> ՍՊԸ**-ն, ի դեմս Ընկերության տնօրեն **Արմինե Հայրապետյանի** (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Համակարգչային տեխնոլոգիաների և ծրագրային ապահովումների մշակում և սպասարկում ծառայություններ** մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2(երկու) օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10(տաս) օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **1.150.000 (Մեկ միլիոն մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան **25.12.2016 թ.**:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն

հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.1.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված ծառայությունների ծրագրային ապահովման սպասարկման համար կողմերի միջև կարող է կնքվել համապատասխան ծառայությունների մատուցման վճարովի պայմանագիր:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.7 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է **www.gnumner.am** հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.10 Սույն պայմանագիրը կազմված է **4 (չորս)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Արդարադատության նախարարության աշխատակազմ	<<Մեգասոֆթ>> ՍՊԸ
Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8	Հասցե՝ ք.Երևան, Չարենցի 1
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	ՀՎՀ՝ 220290124225000
ՀՎՀ 900011194157	Բանկ՝ Ակբա-կրեդիտ Ագրիկոլ բանկ Դավթաշեն մ/ճ
ՀԿՀՀ 02506264	ՀԿՀՀ 00931397
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1

<< 11 >> նոյեմբեր 2016 թ. կնքված
N ՀՀԱՆ-ՇՀԾՁԲ-16-15/6-2 *ծածկագրով գնման պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Գնման առարկայի անվանումը	Ձեռքբերվող Ծառայության նկարագիր
<< արդարադատության նախարարության պաշտոնական կայքում ծրագրային փոփոխությունների իրականացման ծառայություններ	**<< Արդարադատության նախարարության պաշտոնական կայքում ծրագրային փոփոխությունների իրականացման տեխնիկական բնութագիր** 1. Կատարել կայքի արտաքին տեսքի և ներքին էջերի վերադասավորություն պատվիրատուի կողմից տրված առաջարկների հիման վրա՝ նախօրոք այն համաձայնեցնելով պատվիրատուի հետ 2. Կայքի բոլոր բաժինները թարգմանել հայերեն և անգլերեն լեզուներով 3. Ստեղծել նոր ենթահամակարգ << արդարադատության նախարարության պաշտոնական կայքում էլեկտրոնային թվային ստորագրությամբ ուղղակիորեն հարցում գրելու կամ ստորագրված հարցումները կցելու հնարավորությունը, որը հնարավորություն կտա մուտքագրված տվյալները տեղադրել նախարարության կողմից տրամադրվող ձևաթղթում և էլեկտրոնային ստորագրությամբ ստորագրելով ուղարկել նախարարություն 4. Հարցումներ կամ դիմումներ ուղարկելու համար նախատեսված ենթահամակարգում պետք է ստեղծվի օգտվողների գրանցման հնարավորություն, որից հետո միայն օգտվողները հնարավորություն կունենան ուղարկելու հարցում կամ դիմում 5. Պաշտոնական կայքից էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրված հարցումները պետք է անցնեն ստուգում, որի ընթացքում պետք է ստուգվի նշված հարցումը ստորագրված լինելու փաստը և ստորագրության վավերությունը 6. Կայքի ադմինիստրատիվ մասում ստեղծել բաժին պաշտոնական կայքից էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրված հարցումները դիտելու և որոնելու համար 7. Ստեղծել հնարավորություն էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրված հարցումներն ավտոմատ կերպով ուղարկել նախարարությունում կիրառվող փաստաթղթաշրջանառության համակարգ 8. << արդարադատության նախարարության պաշտոնական կայքում ներառել «Ուղարկել հարցում/դիմում» կամ այլ համապատասխան բաժին, որտեղ, ելնելով գործունեության առանձնահատկություններից, պետք է

	տեղադրվեն ՀՀ արդարադատության նախարարությանը ներկայացվող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված տեղեկատվություն ստանալու մասին հարցումների օրինակելի ձևերը և դրանք լրացնելու վերաբերյալ ցուցումները: Հարցման օրինակելի ձևը պետք է ներառի՝ 1. դիմողի անունը և ազգանունը (իրավաբանական անձի դեպքում՝ դրա անվանումը, գտնվելու վայրը), 2. բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը (հասցեն), 3. քաղաքացիությունը, 4. հեռախոսահամարը, 5. էլեկտրոնային փոստի հասցեն, 6. հարցման բուն էությունը, 7. ծանուցում ստանալու եղանակի մասին նշումը 9. Կայքի կառուցվածքի գրաֆիկական պատկերում կատարել համապատասխան փոփոխություն ՊՈԱԿ-ներ բաժնի մեջ ավելացնել Անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը և Արդարադատության Ակադեմիան 10. Հայտարարություն բաժնում ավելացնել ևս մեկ ենթաբաժին՝ Հրավեր ԶԼՄ ներկայացուցիչների համար վերտառությամբ: 11. Նախարարության պաշտոնական կայքի գլխավոր էջում ավելացնել e-citizen.am համակարգով ծանուցումների համար նախատեսված պաշտոնական էլեկտրոնային փոստ՝ համապատասխան հղման հնարավորությամբ 12. Ստեղծել հատուկ բաժին <<Ընդունելություն>> բաժնի <<Ընդունարանի աշխատանքային ժամեր>> ենթաբաժնով, որը հասանելի կլինի կայքի գլխավոր էջում 13. <<Իրավական ակտերի նախագծեր>> ենթաբաժնում ավելացնել ֆայլեր կցելու հնարավորություն (մեկ կամ մի քանի), մասնավորապես՝ (.doc, .docx, .pdf) ֆայլերի հնարավորություն, որը հնարավոր կլինի անմիջապես ներբեռնել համակարգիչ 14. Կայքի ադմինիստրատիվ մասի հարցումներ բաժնում ավելացնել հարցման քվեարկությանը մասնակցողների ընդհանուր թիվը տեսնելու հնարավորություն 15. «Գրադարան» բաժնի «իրավական ակտերի նախագծեր» ենթաբաժնում ավելացնել ֆայլերի կցման հնարավորություն 16. Անհրաժեշտ է ապահովել պաշտոնական կայքի ամբողջ բովանդակության նկատմամբ որոնումը՝ առանց կառուցվածքը հաշվի առնելու: Որպեսզի պաշտոնական կայքի այցելուն սկսի որոնումը, նա պետք է նշի առնվազն երեք թիվ կամ տառ: Որոնման արդյունքում տրվում է վերնագիր, որը պարունակում է այն բառը, որը համապատասխանում է որոնման չափորոշչին: էջերի վերնագրերը հղումներ են այդ էջերի համար: 17. Ապահովել կայքի ֆռոնթհենդ («Frontend») և բեքենդ («Backend») հատվածների իրարից անկախ աշխատանքը 18. Կայքի ֆռոնթհենդ («Frontend») և բեքենդ («Backend») հատվածների ծրագրային կոդերում տվյալների բազային միանալու համար սահմանել

	առանձին օգտագործողներ՝ իրենց պայմանական անուններով և գաղտնաբառերով, յուրաքանչյուրին տալով իրավունքներ՝ իր գործառույթներին համապատասխան 19. Պաշտոնական կայքում տեղակայված տեղեկատվության պաշտպանության նպատակով պետք է ապահովել պաշտոնական կայքի ծրագրային ապահովման և տեխնոլոգիական միջոցների օգնությամբ իրագործված գործողությունների հաշվառման էլեկտրոնային մատյանի վարումը, որը հնարավորություն է տալիս ապահովելու պաշտոնական կայքում տեղեկատվության տեղաբաշխման, փոփոխման և հեռացման բոլոր գործողությունների, փոփոխությունների ճշգրիտ ժամանակի և բովանդակության, ինչպես նաև այդ գործողություններն իրականացնող պետական մարմնի լիազոր աշխատողի մասին տեղեկությունների ամրագրումը 20. Պաշտոնական կայքը պետք է ապահովի տարբեր դիտարկիչների (browser) հետ համատեղելիություն և մատչելի ընթերցելիություն: 21. Ծրագրային փոփոխությունները պետք է կատարել առանց կայքի առկա ծրագրային կոդի փոփոխության, ինչպես նաև պետք է օգտագործվի նույն տեխնոլոգիական հենքը 22. Պաշտոնական կայքը պետք է ապահովի համարժեք դիտման հնարավորություն համակարգիչների վրա՝ ճանաչում ունեցող դիտարկման դիտարկիչներով: Դիտման ժամանակ թույլատրելի տարբերությունը պետք է կազմի էջի ընդհանուր ծավալի 10-15 տոկոսը:
	Ծառայության մատուցման ժամկետը
	Սկիզբը / ավարտը
	Պայմանագրի կնքման օր 11.11.2016թ. / Պայմանագրի կնքման օրվանը հաջորդող 10-րդ օրացուցային օր:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

<< Արդարադատության նախարարության ազգային ինստիտուտ>>
Ք. Երևան, Կ.Սարգսյան 3/8
<< Ֆինանսների նախարարության գանձապետական կառավարման տեսչություն
[illegible]
[illegible]

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

<<Մեգասոֆթ>> ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Չարենցի 1
Հ/Հ՝ 220290124225000
Բանկ՝ Ակբա-կրեդիտ Ագրիկոլ բանկ
Դավթաշեն մ/ճ
ՀԿՀ՝ 00931397

(ստորագրություն)

Կ.Տ.

«ՄԵԳԱՍՈՖԹ»
"MEGASOFT"
"МЕГАСОФТ"
00931397

Հավելված 2
<< 11 >> նոյեմբեր 2016 թ. կնքված
N ՀՀԱՆ-ՇՀԾՁԲ-16-15/6-2 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2016թ. պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ըստ ամիսների՝ ընդ որում											
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	ՀՀ արդարադատության նախարարության պաշտոնական կայքում ծրագրային փոփոխությունների իրականացման ծառայություններ	-	-	-	-	-	-	-	-	-	-	1150000	1150000	1150000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արդարադատության նախարարության աշխատակազմ
Ք. Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011[illegible]4157
ՀՎՀՀ 02500[illegible]

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ

<<Մեգասոֆթ>> ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Չարենցի 1
Հ/Հ 220290124225000
Բանկ՝ Ակբա-կրեդիտ Ագրիկոլ բանկ
Դավթաշեն մ/ճ
ՀՎՀՀ 00931397

(ստորագրություն)

Հավելված 3
<< 11 >> նոյեմբեր 2016 թ. կնքված
N ՀՀԱՆ-ՇՀԾՁԲ-16-15/6-2 *ծածկագրով գնման պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
<< 11 >> նոյեմբեր 2016 թ. կնքված
N ՀՀԱՆ-ՇՀԾՁԲ-16-15/6-2 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան <<11 >> նոյեմբեր 2016 թ.

<<Մեգասոֆթ>> ՍՊԸ, ի դեմս Ընկերության տնօրեն՝ **Արմինե Հայրապետյանի** , որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1Ընկերությունը մասնակցում է **<<ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի>>*** (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ **<<Համակարգչային տեխնոլոգիաների և ծրագրային ապահովումների մշակում և սպասարկում ծառայությունների >>*** ձեռքբերման **<< ՀՀԱՆ-ՇՀԾՁԲ-16-15/6-2 >>*** ծածկագրով ՇՀ** գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՈԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքված պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

<<Մեգասոֆթ>> ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Չարենցի 1
Հ/Հ՝ 220290124225000
Բանկ՝ Ակբա-կրեդիտ Ագրիկոլ բանկ Դավթաշեն մ/ճ
ՀՎՀՀ 00931397
Տնօրեն՝ Ա.Հայրապետյան

Կ.Տ

** Նախապես լրացվում է պատվիրատուի կողմից՝ հրավերով:*

*** Պատվիրատուի կողմից նախապես հրավերով լրացվում է գնման ընթացակարգը:*

1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[2] N
(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ " 11 " նոյեմբեր 2016թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ <<Մեգասոֆթ>> ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝ Ակբա-կրեդիտ Ագրիկոլ բանկ Դավթաշեն մ/ճ

5. Վճարողի հաշվի համարը՝ 220290124225000

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 00931397

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմ

9. Շահառուի ՀՎՀՀ՝02506264

10.Շահառուի բանկը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարան

11.Շահառուի հաշվի համարը /հշ.N/ ՀՀ 900011194157

12.Գումարը թվերով և բառերով՝115000 (մեկ հարյուր տասհինգ հազար)ՀՀ դրամ

13.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ Դրամ AMD

14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ ՀՀԱՆ-ՇՀԾՁՐ-16-15/6-2-գնման պայմանագրի ապահովում

15.Պայմանագրի ծածկագիրը՝ ՀՀԱՆ-ՇՀԾՁԲ-16-15/6-2

16.Փաստաթղթի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝--- էջ

18.Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 19.բ. Կ.S.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 18.բ. Կ.S.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.S. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.S. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

[2] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն իրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*